# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 15 - Ա
05 փետրվարի 2015 թ.

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ՉԱՆՑԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԿՑԱԳՐՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 657-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինվորական հաշվառման կարգի 8-րդ կետը

***որոշում եմ՝***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի 1999 թվականին ծնված արական սեռի քաղաքացիների և նախկինում կցագրում չանցած զինապարտների բժշկական ստուգումը և կցագրումն անցկացնելու նպատակով.

   1) ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքի զինվորական կոմիսարներին՝ հունվար-մայիս ամիսներին անցկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի 1999 թվականին ծնված արական սեռի քաղաքացիների և նախկինում կցագրում չանցած զինապարտների կցագրում.
   2) հաստատել կցագրման հանձնաժողովների կազմերը՝ համաձայն հավելվածի.
   3) հանձնաժողովներին՝ կազմակերպել կցագրման ենթակա արական սեռի քաղաքացիների բժշկական քննությունը.
   4) առաջարկել համայնքների ղեկավարներին, անկախ կազմակերպական իրավական ձևից գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ զինվորական կոմիսարիատների ծանուցագրերի համաձայն կցագրման ենթակա արական սեռի քաղաքացիներին ներկայացնել կցագրման տեղամասեր՝ ապահովելով նրանց բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով.
   5) մարզի տարածքի հիվանդանոցների և պոլիկլինիկաների տնօրեններին՝
      ա. ապահովել կցագրման հանձնաժողովներում ընդգրկված բժիշկների ամենօրյա պարտադիր մասնակցությունը.

բ. կցագրման հանձնաժողովներին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով.

գ. մինչև 2015 թվականի փետրվարի 15-ը զինկոմիսարիատներ ներկայացնել կցագրման ենթակա արական սեռի քաղաքացիների բժշկական փաստաթղթերը /ձև25/.

6) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը /պետ՝ Ա. Ադամյան/՝

ա. ապահովել հասարակական կարգը կցագրման տեղամասերում.

բ. աջակցել կցագրմանը չներկայացած կցագրման ենթակա արական սեռի քաղաքացիներին զինկոմիսարիատներ բերման ենթարկելու հարցում.

7) առաջարկել մարզի քաղաքային համայնքների ղեկավարներին՝ ՔԿԱԳ – ների միջոցով ապահովել 1999 թվականին ծնված արական սեռի քաղաքացիներին ծննդյան վկայականների պատճեններով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. փետրվարի 5 -ի
N 15 - Ա որոշման

ԿԱԶՄԸ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ՉԱՆՑԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔ

| | | |
|---|---|---|
| 1. | Խաժակ Սույան | Գավառի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ |
| 2. | Կարինե Մինանյան | ակնաբույժ |
| 3. | Լաուրա Մնացականյան | նյարդաբան |
| 4. | Համեստ Հայրապետյան | հոգեբույժ |
| 5. | Անահիտ Կարապետյան | քիթ-կոկորդ-ականջ |
| 6. | Գայանե Ղուլյան | սրտաբան |
| 7. | Արկադի Մինասյան | մաշկավեներոլոգ |
| 8. | Դավիթ Գրիգորյան | թերապևտ |
| 9. | Արմեն Աղաջանյան | վիրաբույժ |
| 10. | Զոյա Ղարիբյան | բուժքույր |
| 11. | Վիլետա Մարտոյան | քարտուղար |

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔ

| | | |
|---|---|---|
| 1. | Գևորգ Միխեյան | Մարտունու զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ |
| 2. | Հոմերոս Ավետիսյան | թերապևտ |
| 3. | Սպարտակ Այվազյան | քիթ-կոկորդ-ականջ |
| 4. | Գուրգեն Դավթյան | հոգեբույժ |
| 5. | Վարդան Կարապետյան | վիրաբույժ, |
| 6. | Կարինե Թառոյան | ակնաբույժ |
| 7. | Գագիկ Վարդանյան | մաշկավեներոլոգ |
| 8. | Վիկտոր Սահակյան | սրտաբան |
| 9. | Ինգա Դարբինյան | նյարդաբան |
| 10. | Նարինե Հովեյան | բուժքույր |
| 11. | Լիլիթ Լալայան | քարտուղար |

ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔ

| | | |
|---|---|---|
| 1. | Տիգրան Աթայան | Սևանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ |

2. Թերեզա Գալստյան թերապևտ,
3. Արսեն Մարգարյան վիրաբույժ
4. Ալլա Հովհաննիսյան ակնաբույժ
5. Հմայակ Ալեքսանյան մաշկավեներոլոգ
6. Տաթևիկ Վարդանյան սրտաբան
7. Մայրանուշ Առաքելյան հոգեբույժ
8. Նարինե Դավթյան նյարդաբան
9. Արկադի Առաքելյան քիթ-կոկորդ-ականջ
10. Աստղիկ Ահարոնյան բուժքույր.
11. Օսաննա Գաբրիելյան քարտուղար

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾՔ

1. Գարիկ Առաքելյան Վարդենիսի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
2. Ռուբեն Խաչատրյան վիրաբույժ,
3. Ռոլանդ Խաչատրյան քիթ-կոկորդ -ականջ
4. Ժասմենա Շաքոյան ակնաբույժ
5. Աննա Զարգարյան նյարդաբան
6. Արամ Ալեքսանյան հոգեբույժ
7. Անահիտ Սարգսյան թերապևտ
8. Վալերի Նուռոյան սրտաբան
9. Գագիկ Մկրտչյան մաշկավեներոլոգ
10. Անահիտ Քալոյան բուժքույր
11. Էթերի Գալստյան քարտուղար

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔ

1. Ազատ Ապրեսյան Ճամբարակի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
2. Արարատ Խեչոյան մաշկավեներոլոգ
3. Վիգեն Գրիգորյան վիրաբույժ
4. Մարինե Խաչատրյան թերապևտ,
5. Էլիզա Բուրչախյան հոգեբույժ
6. Սարո Պետրոսյան ակնաբույժ
7. Ռոզա Ավայան քիթ-կոկորդ -ականջ
8. Գրիգոր Իսրաելյան սրտաբան
9. Ավետիս Դանիելյան նյարդաբան
10. Նունիկ Բայյան բուժքույր
11. Վարսիկ Սարիբեկյան քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ